

<p>Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)</p>	<p align="center"><b>ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (7.20ՃՏՊ003)</b></p>
<p>ECTS կրեդիտ</p>	<p>3 կրեդիտ</p>
<p>Ուսումնառության վերջնարդյունքներ</p>	<p align="center">Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p align="center"><i>(գիտելիք և իմացություն)</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուրվագծել պատմական ժամանակաշրջաններում ճարտարապետության տեսության հիմնական խնդիրները,</li> <li>• ճանաչել տեսության, քննադատության և գործնական ճարտարապետության հարաբերությունները և փոխադարձ կապերը:</li> </ul> <p align="center"><i>(կարողություններ)</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• Ժամանակակից գիտափիլիսոփայական տեսակետների հիման վրա կազմել գիտական խոսք ու տեքստ,</li> <li>• ճարտարապետական նախագծերում օգտագործել ճարտարապետական հնարքներ՝ մետաֆորա, ասոցիացիա, խորհրդանիշ,</li> <li>• գործնականում իրականացնել նախագծային աշխատանքներում պատմական կառույցի, բովանդակության ու ձևի խորհրդանշական և մետաֆիզիկական տեսական վերլուծություն:</li> </ul>
<p>Դասընթացի թեմատիկ ծրագիր</p>	<ul style="list-style-type: none"> <li>• ճարտարապետական կրթությունը, դասընթացի նպատակը և խնդիրները: ճարտարապետական տեսության հիմնական հասկացողությունները:</li> <li>• Անտիկ ժամանակաշրջան, Եգիպտոս: Եգիպտական ճարտարապետության առաջադեմ տարրերը:</li> <li>• Անտիկ ժամանակաշրջան, Հին Հռոմ: Հռոմեական ճարտարապետություն: Վիտրուվիուսի «Տաս գիրք ճարտարապետության մասին»:</li> <li>• Միջնադար, քրիստոնեություն և փիլիսոփայություն: Քրիստոնեական խորհրդաբանություն: Խորհրդանշաններ և ատրիբուտներ: Վաղ քրիստոնեական ճարտարա-</li> </ul>

	<p>պետության ոճական առանձնահատկությունները և համաչափությունների համակարգը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Միջնադար, ռոմանական և գոթական ճարտարապետության ոճական առանձնահատկությունները և համաչափությունների համակարգը:</li> <li>• Վերածնունդ: Հումանիզմ: Իտալական ակադեմիաները: Վերածննդի տեսական ժառանգությունը:</li> <li>• Ճարտարապետության տեսաբան Լեոն Բատիստա Ալբերտի՝ իտալական հումանիստի իդեալական կերպարը: Իդեալիզմը ճարտարապետության մեջ:</li> <li>• 19-րդ դարի ռոմանտիզմի գաղափարների ծագման նախապայմանները և զարգացման հիմնական ուղղությունները:</li> <li>• «Արվեստների և արհեստների շարժում»:</li> <li>• «Արվեստը արվեստի համար» տեսականորեն և գործնականում: Կյանքի փիլիսոփայությունը: Էություններ ապոլոնյան և դիոնիսյան: Դեկորատիվ ինդուստրիալիզմ:</li> <li>• Նեոպլաստիցիզմը գեղանկարչության և ճարտարապետության մեջ: Ֆուտուրիզմը արվեստի և ճարտարապետության մեջ:</li> <li>• Ռուսական ճարտարապետական ավանգարդը:</li> <li>• 20-րդ դ. կեսի արևմտյան ճարտարապետության և դիզայնի վարպետների տեսական կոնցեպցիաները: Մետաֆրիզմ և պոստմետաֆրիզմ:</li> </ul>
<p>Դասընթացի գրականության ցանկ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Витрувий. Десять книг об архитектуре. - М.: КомКнига, 2005г. - 320с.</li> <li>• Иконников А.В. Утопическое мышление и архитектура. - М.: Издательство «Архитектура-С», 2004г. - 400с.</li> <li>• Кох В. Энциклопедия архитектурных стилей. Классический труд по европейскому зодчеству от античности до современности. - М.: БММ АО, 2005г. - 528с.</li> <li>• Очерки истории теории архитектуры Нового и Новейшего времени / НИИ теории архитектуры и градостроительства. - Санкт-Петербург: Коло, 2009г. - 656с.</li> <li>• Evers, Bernd. Architectural Theory: From the Renaissance to the Present. - Köln: Taschen, 2006, 575p.: ISBN 3822850853.</li> </ul>